ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 18.06.2020թ. ԹԻՎ 399-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

6 հուլիսի 2020թ.,
ժամը 13:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա. Մելիք-Հովսեփյան ԿԾ ՎԿԿ ղեկավար
Ս. Խաչատրյան ԿԾ ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Բ. Գևորգյան ՆԾ ՀՕԿ ղեկավար
Ա. Ստեփանյան ԿԾ ՌԿԿ առաջատար ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ԻՊԳ բաժնի մասնագետ

Հանձնաժողովի նախագահ Յու. Իվանովը (ԿԾ ՌԿԿ ղեկավար)՝ հերթական արձակուրդում է

Օրակարգ՝

1. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով <<Անխափան սնուցման աղբյուր>>-ի ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի հայտերի բացում և գնահատում՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում.

<<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը (www.armeps.am) համակարգում իրականացվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

<<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտ էին ներկայացրել՝ <<ԼանԱր Սերվիս>> ՍՊԸ-ն և <<Միկրորինգ>> ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի չափաբաժինների համար սահմանված նախահաշվային գները:

ՀՀ	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային գինը
1	Անխափան սնուցման աղբյուրներ	1000000
2	Անխափան սնուցման աղբյուրներ	7000000

Այնուհետև հանձնաժողովի նախագահը հրապարակեց մասնակիցների գնային առաջարկներն՝ ներառյալ ԱԱՀ:

ՀՀ	Նախահաշվային գինը	<<ԼանԱր Սերվիս>> ՍՊԸ	<<Միկրորինգ>> ՍՊԸ
1	1000000	987000	995400
2	7000000		6984600

Հանձնաժողովն արձանագրեց, որ <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով <<ԼանԱր Սերվիս>> ՍՊԸ տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում նշված հրավերի պահանջներին, մասնավորապես.

h/h	***Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրերը***	***Մասնակցի կողմից ներկայացված բնութագրերի անհամապատասխանությունը***
1	Մուտքային լարման տիրույթը՝ 151 - 302 Վ	Մուտքային լարման տիրույթը՝ 160 - 300 Վ.
2	Ելքային լարման կայունությունը (մարտկոցի ռեժիմ)՝ ±5%	Ներկայացված չէ
3	Կառավարման ինտերֆեյսները՝ USB, Ethernet 10/100.	Կառավարման ինտերֆեյսները՝ USB
4	Մարտկոցի լիցքավորելու ժամանակը՝ ոչ ավելին 3 ժամ	Մարտկոցի լիցքավորելու ժամանակը՝ 4 ժամ
5	Բարձրությունը և լայնությունը՝ 86 x 432 մմ	Բարձրությունը և լայնությունը՝ 88 x 438 մմ
6	Քաշ՝ ոչ ավելին 34 կգ	Ներկայացված չէ
7	Երաշխիքային ժամկետ՝ ոչ պակաս 2 տարի	Երաշխիքային ժամկետ՝ ոչ պակաս 2 տարի: Երաշխիքային ժամկետը հստակ նշված չէ:

Հանձնաժողովը ***միաձայն որոշեց հիմք ընդունելով***.

1. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.7 և 8.9 կետերը, մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել <<ԼանԱր Սերվիս>> ՍՊԸ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել ապրանքի ամբողջական նկարագրի անհամապատասխանությունները հրավերի պահանջներին:

2. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-22/20>> ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 08.07.2020թ. ժամը 11:30-ը:

Ա. Մելիք-Հովսեփյան		Հանձնաժողովի անդամ
Ս. Խաչատրյան		Հանձնաժողովի անդամ
Բ. Գևորգյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Ստեփանյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար